ՀԱՆԳՈՒՍՏ
ՍՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՎԱՐԴԱՆ ՔԱՀԱՆԱ ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆԻ



Փետրվարի 19-ին վախճանվեց արժ. Տ. Վարդան քահանա Ա. Վարդերեսյանը։

Հանգուցյալը ծնվել է 1875 թվականի մայիսի 3-ին Հաջի-Հաբիբլիում (Մուսա-լեռ, Սիրիա)։ Նախակրթությունը ստանալով ծրխական դպրոցում, նա ինքնուրույն ջանասիրությամբ զարգացրել է իր մտահորիզոնը և հետագայում միևնույն դպրոցում և այլուր կատարել է ուսուցչի պաշտոն։

1913 թվականին նա ձեռնադրվել է քահանա ծննդավայրի Ս. Աստվածածին եկեղեցու վրա և 40 տարի վարել անբասիր եկեղեցականի կյանք։ 1914 թվականին նա եղել է Մուսա-լեռան հերոսամարտի գործուն կազմակերպիչներից, և իր ժողովրդի հետ ապաստանելով Պոր-Սաիդի գաղթականությանը, մինչև զինադադարը վարել առաջնորդական տեղապահի պաշտոնը, ուսուցել տեղի ազգային «Սիսվան» վարժարանում և մասնակցել ազգային-հասարակական աշխատանքների։

Վերադառնալով իր ծննդավայրը, նա քահանայագործել է այնտեղ մինչև 1926 թվականը, երբ հոգևոր վերին իշխանության կողմից ուղարկվել է Համա (Սիրիա)՝ որպես քահանա և ուսուցիչ, ապա 1927 թվականին վերադարձել Հալեպ և մինչև 1938 թվականը քահանայագործել տեղի Նոր-Գյուղ թաղամասի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում։

1938 թվականին հաստատվելով Բեյրութում (Լիբանան), նա եղել է Ս. Հարությունն եկեղեցու քահանան, վարել կրոնական ժողովի ատենապետությունը և անդամակցել ազգային-եկեղեցական այլ ժողովների։

1946 թվականին նա վերադարձել է Սովետական Հայաստան, և, մի տարի Էջմիածնի վանքում բնակվելուց հետո, տեղափոխվել Երևան և հաստատվել հայրենի երկրում։

Հանգուցյալը ծանոթ էր իր գրասիրությամբ։ Նա հայկական հրատարակությունների լավ բիբլիոգրաֆ էր և իր գրքերից ու հիշողությամբ կազմել էր Երուսաղեմի Ս. Հակոբյանց տպարանի գրացուցակը, որը հրատարակվել է տպարանի հիմնադրման հոբելյանի առիթով։

Հանգուցյալը հմուտ էր հայ եկեղեցական տոմարագիտության և պատրաստում էր օրացույցներ։ Ունի մի համեստ անտիպ երկ՝ «Մեռոն և մեռոնօրհնեք» խորագրով։

Իր անբասիր կյանքով, համեստ ու ժողովրդասեր բնավորությամբ, հանգուցյալը սիրվել և հարգվել էր ժողովրդից։

Վեհափառի բարեհաճ կարգադրությամբ, հանգուցյալի թաղումը տեղի ունեցավ արժանավայել կերպով։ Տան կարգն ու լվացումը կատարվելուց հետո, շաբաթ օր, փետրվարի 21-ին, հանգուցյալի մարմինը փոխադրվեց Երևանի Ս. Սարգիս եկեղեցին։ Կիրակի, փետրվարի 22-ին, պատարագի ընթացքում կատարվեց օծումը դերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսի ձեռքով և մասնակցությամբ քահանայից դասի։ Սրբազանը խոսեց դամբանական, դրվատելով հանգուցյալի համեստ արժանիքները։ Հուզումով խոսեց և հուղարկավորներին հուզեց նաև հանգուցյալի հայրենակից և նրա աշակերտ Տ. Հակոբ քահանա Քելամյանը։

Ապա, սգակիրների և հանգուցյալի հիշատակը հարգողների ուղեկցությամբ, դագաղը առաջնորդվեց Ս. Էջմիածին, իր վերջին հանգստարանը՝ Ս. Գայանեի վանքի հյուսիսակողմը, միաբանական դամբարանների շարքում փորված գերեզմանը։

Հանգի՜ստ հանգուցյալի աճյուններին։